

puram qualis apud nos est. Իրաւցնէ այնպէս աղուոր ծիրանի ներկած էր որ՝ բոլոր Հոռմայեցիք զարմացան, կ'ըսէ պատմիչը: Եւ որովհետեւ ան ատենը Հայաստանը Պարսից իշխանութեան տակ էր, շատ հաւանական է որ Հայաստանի որդանովը ներկած ըլլայ ան բրդեղէնը, ինչպէս Համէլն ալ կ'ըսէ: Ինքը կարծիք կ'ընէ թէ նաեւ Ս. Գրոց մէջ ստէպ յիշուած որդան կարմիրը՝ Հայաստանի բերք ըլլայ»¹:

Հին Հայ մատենագրաց մօտ ալ կը յիշուի Որդանը իբր ազնիւ, իբր հարուստ, ճոխ և թանկագին ինչ: Տեսանք թէ Փարպեցի կ'ըսէ «յԱրարատայ ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց»: Խորենացի նոյնպէս կը յիշէր «Եւ որդն յարմատոյ սիգոյ ի զարդ կարմրութեան գունոյ»: Արար պատմիչ Բէլլագորի Ը դարուն կը վկայէ «Հարիբ եկաւ Արտաշատ, որ է Ալ-Քիրմիզ»², այսինքն Որդանի քաղաք: Նկատելու է որ «Արտաշատ որ Դուինէ քանի մը հազար մեզր հեռու կը գտնուէր՝ այնքան համբաւուոր էր իր ներկարաններով, որ Ալ-Պալատհորի Ժ դարուն՝ զայն կարմիր գոյնի քաղաք կ'անուանէ (քարիաթ-ալ-բըրմըզ)»³: Ժ դարուն Յովհաննէս պատմագիր կաթողիկոսը կը վկայէ թէ Հայաստանի մէջ կային «նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանայ», մինչ ըստ Ասողիկի «ծիրանեծաղիկ» կը յիշուի զոր կը նոյնացընեմ որդանին հետ: Իսկ դարձեալ Ժ դարուն Արար աշխարհագիր Իպն Հաուգալ (Իսթախրի) որոշ կը վկայէ «Տէինիլ Արտեպիլէն աւելի մեծ քաղաք մըն է... կը պատրաստեն գեղեցիկ ներկ մը զըրմըզ (= kermez) կոչուած: Ես իմացած եմ որ այս զըրմըզը տեսակ մը որդ է»⁴: Իպն Հաուգալի Տէինիլը ըստ իս Արարացոց Տապիլն է և Հայոցս Դուինը: «Դուինում քիրմիս են պատրաստում, որ կարմիր ներկ է բրդի համար, ես լսած եմ որ դա մի սրդի անուն է», Բագրատ Խալաթեանցի հաւաստմանց համաձայն⁵: ԺԳ դարուն Եագութ ալ կը յիշէ զեռ Արտաշատի քա-

րիաթ-ալ-բըրմըզ կոչուիլը: Ժէ դարուն Շարտէն Հայաստանի մէջ հանգրպած էր որդանին. իսկ ԺԸ դարուն Մարկով Ռուսը որդան կը գտնէր Արարատի վրայ բարձրանալուն միջոցին 14-15,000 ոտք բարձրութեան վրայ: ԺԹ դարուն սկիզբը Ս. Փեթերպուրկի ճեմարանին խնդրանացը վրայ վրաստանի և Հայաստանի նահանգապետը երկու Ռուս պաշտօնատարներու կը յանձնէ պրպտել, որոնց օգնական կ'ըլլայ Էջմիածնի միաբան Սահակ Վ. Տէր Գրիգորեան տեղեկագրով մը որ նիւթ կը կազմէ Համէլի մէջ ուսումնասիրութեան Փեթերպուրկի նոյն ճեմարանին մէջ, 1832ին, որ յետոյ Ռուսերէն ալ կը հրատարակուի:

Անտարակոյս ասկէ զատ պատմական նիւթ ալ կայ որ հոս չեմ յիշած, նիւթ որուն կարելի է հանգրպիլ քիչ մը փընսրոտուցով: Եւ սակայն այսքանով զոհանանք այժմ, արդէն մեր ուսումնասիրութեան պահանջած փաստերն ստացած ըլլալով:

* * *

Երկու խօսք ալ Գըրմըզի կամ Որդանի գործածութեան մասին:

Ըստ Հ. Ալիշանի Հայկական Որդան (կարմիրը) «ամենէն ընտիր և ամենէն հին ճանչցուած որդն կարմրոյ, հռչակեալ իր շտապիայլ գունով, որով թագաւորաց ծիրանիք և հրովարտակը կը ներկուէին, զոր կը յիշէ և Դիոսկորիտէս: Արարացիք կարմիրը մտուցին յԵրրոպա, հիմա Ռուսք անկէ շահ կը քաղեն, և զեռ Էջմիածնի կաթողիկոսաց կոնդակներն կը գրուին այս Արարատայ նշանաւոր բերքով»⁶:

1. «Բագմովէզ», 1843, էջ 56-57.
 2. Արար. մատ. Հայաստանի մասին, Թրգ Բագրատ Խալաթեանց, էջ 26: Ծանօթ. թիւ 2.
 3. Հայկական Գորգերը, կոչնակ 1920 էջ 368: Ծանօթ. թիւ 6.
 4. The Oriental Geo. of Ebn Haukal Istakhri (902-968 A. D.) Trans. Sir William Ousley. Kent. L. L. D. London 1800 էջ 161.
 5. Արար. Մատ. Հայ. մասին, էջ 43, ծանօթ. թիւ 2.
 6. Յուշիկը Բ. հրատ. Բ. մաս էջ 52.